# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Ֆիոլետովո համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Ֆիոլետովո** | Ավագանու նիստ | 06.12.2021թ. | 12:30 | **Ֆիոլետովոյի** ավագանու նիստերի դահլիճ (գ.Ֆիոլետովո 1 փ.146) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. դեկտեմբերի 6-ին՝ ժամը 12.30-ին Ֆիոլետովոյի ավագանու նիստերի դահլիճում կայանալիք համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի

**<u>ժամը՝ 12.30</u>**

1. Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 6-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ.Արարատ Աբրահամյան

2. Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.Վալենտինա Նովիկովա

3. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին

զեկ.Արարատ Աբրահամյան

4. Ֆիոլետովո համայնքապետարանի եվ գրադարանի 2021թ.գույքագրման արդյունքները հաստատելու մասին

զեկ.Արարատ Աբրահամյան

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 6-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 6-ի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Ֆիոլետովոյի համայնքապապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
3. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին
4. Ֆիոլետովո համայնքապետարանի եվ գրադարանի 2021թ.գոհիյքագրման արդյունքները հաստատելու մասին

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ 29**

---

ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. Վալենտինա Նովիկովա*

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերի, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին

1. Հաստատել Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի <<Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 21 որոշման N 1 հավելվածի
3. Սույն որոշման ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 1-ից.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Ղեկավարվելով ՛՛Համայնքային ծառայության մասին՛՛ ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և ՛՛Իրավական ակտերի մասին՛՛ ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով`

Համայնքի ավագանին որոշում է

1. Ֆիոլետովո համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել երեք և հանձնաժողովների անհատական կազմերում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին՝

1) Բլոխինով Ալեքսանդր Վասիլևիչ

2) Նովիկով Ալեքսեյ Վասիլևիչ

3) Չիչյով Միխաիլ Ալեքսեևիչ

2. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 01-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 32-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2021Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի

Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքապետարանի և գրադարանի 2021թ. գույքագրման արդյունքները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ